# Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի» վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև ստորագրված «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր» վարկային համաձայնագիր

**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 08.08.2024թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 19.02.2025թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 40 մլն ԱՄՆ դոլար
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2029թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝**
15.07.2039թ. - 15.01.2049թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագիր

**Ենթավարկային համաձայնագրի անվանումը՝ Հայաստանի էներգետիկ անցումը ապահովող ծրագիր**
**Ենթավարկային համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 03.02.2025թ.
**Ենթավարկային համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 03.02.2025թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված գումարը՝** 40 մլն ԱՄՆ դոլար
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** բազային դրույքաչափ (SOFR Index) + ՀԲ փոփոխական սփրեդ
**Ենթավարկային համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2029թ.
**Ենթավարկային համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝**
15.07.2039թ. - 15.01.2049թ.

**Ծրագրի նպատակը՝** ապահովել ավելացված վերականգնվող էներգետիկ կարողությունների ինտեգրումը էլեկտրահաղորդման ցանցում և բարելավել էլեկտրահաղորդման ընկերության առևտրային կենսունակությունը:

**Ակնկալվող արդյունքները՝**
- Ենթակայանների հիմնանորոգման աշխատանքների իրականացում
- Գործառնական բարելավումներ
- Մեծածախ էներգետիկ շուկայի հետագա ազատականացում

- Սակագնային նոր մեթոդաբանության ներդրում
- Ընկերության կողմից միջազգային վարկային վարկանիշի ստացում
- Կորպորատիվ կառավարման համակարգերի բարելավում և արդիականացում

**Ծրագրի անկախ վավերացնող գործակալի անվանումը՝** Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատու՝ «Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊԸ (Հայաստան)
**Պայմանագրի անվանումը՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատուի» ծառայությունների մատուցման պայմանագիր № «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/02»

**Պայմանագրի գումարը՝** 144,999,000.0 ՀՀ դրամ

**Պայմանագրի ստորագրման ամսաթիվ՝** 04.04.2025թ.

**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 04.04.2025թ.

**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
04.04.2025թ.-30. 06. 2029թ.

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատու՝ «GOPA Tech GmbH» (Գերմանիա)
**Պայմանագրի անվանումը՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար «Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատուի ծառայությունների» մատուցման պայմանագիր N «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/04»

**Պայմանագրի գումարը՝** 2,080,000.0 Եվրո

**Պայմանագրի ստորագրման ամսաթիվ՝** 22.10.2025թ.

**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 22.10.2025թ .

**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
22.10.2025թ.-30.06.2029թ.

**Ծրագրի աուդիտորական ծառայությունների մատուցման անվանումը՝** «Գրանթ Թորնթոն» փակ բաժնետիրական ընկերություն (Հայաստան)
**Պայմանագրի անվանումը՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար ««Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի» ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր N ԲԷՑ-ԲՄԾՁԲ-25/06
**Պայմանագրի գումարը՝** 13,500,000.0 ՀՀ դրամ
**Պայմանագրի ստորագրման ամսաթիվ՝** 22.12.2025թ.
**Պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 22.12.2025թ.
**Պայմանագրով նախատեսված աշխատանքների սկիզբն ու ավարտը՝**
22.12.2025թ.-22.12.2030թ.

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 31.03.2026թ. դրությամբ՝**

«Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊ ընկերության կողմից մատուցված ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 98,738.25 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 3,057.28 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 101,795.52 ԱՄՆ դոլար*

220կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագրի շրջանակներում շինմոնտաժային աշխատանքներ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 12,672.00 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 3,168.00 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 15,840.00 ԱՄՆ դոլար*

«Արամ Կարապետյան» ԱՁ-ի կողմից «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման շրջանակներում խորհրդատվական ծառայություն՝

- *Վարկային միջոցների հաշվին - 4,007.28 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,001.82 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 5,009.10 ԱՄՆ դոլար*

«Արամ Կարապետյան» ԱՁ-ի կողմից 220 կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման շրջանակներում խորհրդատվական ծառայություն՝

- *Վարկային միջոցների հաշվին - 3,905.95 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 976.49 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 4,882.44 ԱՄՆ դոլար*

Կառավարման վճար՝

- *Վարկային միջոցների հաշվին - 100,000.0 ԱՄՆ դոլար*

**Ընդհանուր կատարված աշխատանքները, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 219,323.48 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 8,203.58 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 227,527.06 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումներ 31.03.2026թ. դրությամբ՝**

«Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊ ընկերության կողմից մատուցված ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 99,795.54 ԱՄՆ դոլար*
- *ՀՀ պետական բյուջեի հաշվին - 3,070.06 ԱՄՆ դոլար*

*Ընդամենը - 102,865.60 ԱՄՆ դոլար*

220/110/6կվ «Ագարակ-2» ենթակայանի վերակառուցման կապալային աշխատանքների N ԲԷՑ-ԲՄԱՇՁԲ-22/14-1 պայմանագրի շրջանակներում՝

- *Վարկային միջոցների հաշվին - 773,549.39 ԱՄՆ դոլար*

220կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագրի շրջանակներում շինմոնտաժային աշխատանքներ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 1,811,783.19 ԱՄՆ դոլար*
- *<u>ՀՀ պետական բյուջեի հաշվին - 1,671.48 ԱՄՆ դոլար</u>*

*Ընդամենը - 1,813,454.67 ԱՄՆ դոլար*

220կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագրի շրջանակներում սարք-սարքավորումներ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 172,600.59 ԱՄՆ դոլար*

220կՎ «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման նախագծման, մատակարարման և մոնտաժման պայմանագրի շրջանակներում շինմոնտաժային աշխատանքներ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 330,842.84 ԱՄՆ դոլար*

«Արամ Կարապետյան» ԱՁ-ի կողմից «Արարատ-2» ենթակայանի վերակառուցման շրջանակներում խորհրդատվական ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 30,336.88 ԱՄՆ դոլար*
- *<u>ՀՀ պետական բյուջեի հաշվին - 742.84 ԱՄՆ դոլար</u>*

*Ընդամենը - 31,079.72 ԱՄՆ դոլար*

«Արամ Կարապետյան» ԱՁ-ի կողմից 220 կՎ «Զովունի» ենթակայանի վերակառուցման շրջանակներում խորհրդատվական ծառայություններ՝

- *Վարկային միջոցների հաշվին - 59,952.59 ԱՄՆ դոլար*
- *<u>ՀՀ պետական բյուջեի հաշվին - 717.26 ԱՄՆ դոլար</u>*

*Ընդամենը - 60,669.85 ԱՄՆ դոլար*

Կառավարման վճար՝

- *Վարկային միջոցների հաշվին - 100,000.0 ԱՄՆ դոլար*

**Ընդհանուր կատարված վճարումները, այդ թվում՝**

- *Վարկային միջոցների հաշվին - 3,378,861.35 ԱՄՆ դոլար*
- *<u>ՀՀ պետական բյուջեի հաշվին - 6,201.65 ԱՄՆ դոլար</u>*

*Ընդամենը - 3,385,063.00 ԱՄՆ դոլար*

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝**

Իրականացվել է Անկախ վավերացնող գործակալի ծառայությունների ձեռքբերման մրցույթը, որի արդյունքում 04.04.2025թ. «Փարվանյան Քոնսալթինգ» ՍՊ ընկերության հետ կնքվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության կարիքների համար «Հայաստանի էներգետիկ անցումն ապահովող ծրագրի ցուցանիշների հավաստիացման խորհրդատուի» ծառայությունների N «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/02 պայմանագիրը:

Իրականացվել է Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատուի ծառայությունների ձեռքբերման մրցույթը, որի արդյունքում 22.10.2025թ. GOPA Tech GmbH հետ կնքվել է «Տեխնիկական աջակցության և վերահսկման խորհրդատուի ծառայությունների» մատուցման 2,080,000 եվրո գումարի N «ԲԷՑ-ՆԸ-ԲՄԽԾՁԲ-25/04» պայմանագիրը:

22.12.2025թ. կնքվել է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար «Հայաստանի Էներգետիկ անցումն ապահովող ծրագրի» ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների մատուցման N ԲԷՑ-ԲՄԾՁԲ-25/06 պայմանագիրը՝ 13,500,000.00 ՀՀ դրամ գումարի՝ 5 տարվա համար:

18.09.2025թ. «Շահումյան-2» «Մարաշ» և «Եղեգնաձոր» ենթակայանների վերակառուցման երկու փուլով մրցույթի շրջանակներում հայտարարվել է նախաորակավորման ընթացակարգ, որի շրջանակներում հաստատվել են նախաորակավորված 10 մասնակցի կողմից ներկայացված հայտերը:

Գնման ընթացակարգի առաջին փուլի հրավերը օրենքով սահմանված կարգով տրամադրվել է նախաորակավորված մասնակիցներին՝ հայտերի ներկայացման վերջնաժամկետ սահմանելով 23.10.2025թ.: Մասնակիցների առաջարկով հայտերի ներկայացման վերջնաժամկետը փոփոխվել է՝ երկարաձգվելով մինչև 12.12.2025թ.: Նախաորակավորված մասնակիցներից առաջարկ է ներկայացրել 5 մասնակից: Քննարկումների արդյունքում կհաստատվի և գնահատող հանձնաժողովի քարտուղարին կներկայացվի գնման վերանայված հայտը, որի հիման վրա նախաորակավորված բոլոր մասնակիցներին կտրամադրվի երկրորդ փուլի հրավերը: Վերջինս նախատեսվում է մասնակիցներին տրամադրել մինչև 2026թ. ապրիլի վերջ:

Ծրագիրն իրականացվում է «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ կողմից: